# ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ

08.10.2020 19:02

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը դեսպանատներին, միջազգային կառույցներին և փաստաբանների միություններին կոչ է ուղղել:

Կոչը վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավվմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկած ռազմական հարձակմանը, որի շրջանակներում թիրախավորվել են ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, մշակութային կենտրոնը՝ Շուշին:

***ՀՀ փաստաբանների պալատը կոչ է անում դեսպանատներին, միջազգային կառույցներին, փաստաբանների միություններին իրենց լիազորությունների շրջանակում իրավական գնահատական տալ նշված իրադարձություններին և խստորեն դատապարտել՝***

***1. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից վարձկան ահաբեկիչների ներգրավվումը ռազմական գործողություններին.***

***2.Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) խաղաղ բնակավայրերի, մշակութային օբյեկտների, եկեղեցու և խաղաղ բնակչության ոչնչացմանն ուղղված պատերազմական հանցագործություն համարվող գործողությունները.***

***3. Ադրբեջանի կողմից արգելված զինատեսակների օգտագործումը:***

Փաստաթղթում ներկայացված են նաև Արցախի Հանրապետությունում տիրող իրավիճակի վերաբերյալ փաստերը և իրավական վերլուծությունը:

**Բեռնել փաստաթուղթը հայերեն.**

**Բեռնել փաստաթուղթն անգլերեն.**

**Բեռնել փաստաթուղթը ռուսերեն.**

## Առաջարկվող նորություններ

30.09.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒՆԵՑԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎԵՃԱՐ ՎԵՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

08.10.2020ԻՐԱՎԱՍՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ՁՈՐԱՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՐՑՄԱՆԸ

**09.10.2020**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })